

Վայոց ձորի մարզպետը մասնակցել է ԵՊՀ-ում կազմակերպված գիտաժողովին

30.10.2013



ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը Երևանի պետական համալսարանի ռեկտոր Ա.Սիմոնյանի հրավերով 2013 թվականի հոկտեմբերի 29-ին Երևանի պետական համալսարանում մասնակցել է «Արևելյան գործընկերություն. նպատակներ-պրակտիկա-մարտահրավերներ» թեմայով կազմակերպված գիտաժողովին, որտեղ հանդես է եկել բացման ողջույնի խոսքով: Գիտաժողովը Հայաստանում անց է կացվում «Արևելյան գործընկերություն. նպատակներ-պրակտիկա-մարտահրավերներ ծրագրում ներառված պետություններում ներդրման գործընթացի ուսումնասիրություն» նախագծի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Լեհաստանի արտաքին գործերի նախարարության հանրային և մշակութային դիվանագիտության դեպարտամենտի կողմից «Համագործակցություն հանրային դիվանագիտության ոլորտում 2013թ.» ծրագրի շրջանակներում: Գիտաժողովը կազմակերպել էին Կրակովի Յագելլոնյան համալսարանը և Երևանի պետական համալսարանը: Գիտաժողովի ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկան նաև ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպան Զդիսլավ Ռաչինսկին և Յագելլոնյան համալսարանի միջազգային քաղաքական ուսումնասիրությունների ֆակուլտետի դեկան Բոգդան Շյախտան: Զեկուցումներով հանդես են եկել ՀՀ ԱԺ պատգամավոր Թևան Պողոսյանը, ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Արթուր Ղազինյանը, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոս Նարեկ Գալստյանը, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դասախոս Գրիգոր Հայրապետյանը: